

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 35/3

8 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն» ՀԿ գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 30.07.2015 թ-ի թիվ 1475 որոշման դեմ:

«Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն» ՀԿ գանգատում բերված փաստարկները.

«Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն» ՀԿ (այսուհետ նաև Ընկերություն) գործունեությունը կայանում է բացառապես ընկերության կանոնադրությամբ սահմանված առարկայի և նպատակների իրականացումը (հասարակական գործունեությամբ) (շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում), և ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացնում:

06.08.2015թ.-ին Ընկերությունը նամակ է ստացել Կենտրոնի ՀՏ-ից թվագրված 30.07.2015թ. Որոշում թիվ 1475 (Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին), որտեղ «Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն» ՀԿ-ին, որպես չկրած հարկային պարտավորություններ ոչ ռեզիդենտի շահութահարկից առաջադրվել է 757.210 ՀՀ դրամ: 30.07.2015թ. թվագրված թիվ 1475 որոշման մեջ երեք անգամ նշվում է «ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ» ՍՊԸ, սակայն ընկերությունը հասարակական կազմակերպություն է, որի անվանումն է «Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն» ՀԿ:

Ընկերությունը ներկայացրել է 2013թ.-ի համար ամփոփ հաշվարկ Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից ոչ ռեզիդենտին վճարված եկամուտների, պահված շահութահարկի մասին, որտեղ ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարը 9-րդ և 10-րդ ամսին կազմել է համապատասխանաբար 769,280 ՀՀ դրամ և 1,662,140 ՀՀ դրամ, վճարումը կատարվել է ամբողջությամբ 2013թ.-ի 10-րդ ամսի 19-ին 2,431,420 ՀՀ դրամի չափով: Ընկերությունը ներկայացրել է 2014թ.-ի համար ամփոփ հաշվարկ Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից ոչ ռեզիդենտին վճարված եկամուտների, պահված շահութահարկի մասին, որտեղ ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարը 2-րդ ամսին կազմել է 1,134,520 ՀՀ դրամ, վճարումը կատարվել է ամբողջությամբ 2014թ.-ի 3-րդ ամսի 21-ին 1,134,520 ՀՀ դրամ:

Ընկերությունը 2014թ.-ի փետրվար ամսի 11-ին և 19-ին համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի, փորձել է ուղարկել 2013թ.-ի համար ամփոփ հաշվարկ Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից ոչ ռեզիդենտին վճարված եկամուտների, պահված շահութահարկի մասին, սակայն էլեկտրոնային համակարգի խափանման պատճառով (անհաղթահարելի խոչընդոտ է հանդիսանում ներկայացնել 2013թ.-ի նշված ամփոփ հաշվարկը) նշված ամփոփ հաշվարկը չի հաջողվել ուղարկել: Հետագայում, ինքնուրույն հայտնաբերելով, որ

նշված հաշվարկը չի ուղարկվել (չնայած բոլոր հարկային պարտավորությունները ամբողջությամբ մարված են), 19.07.2014թ.–ին այն ուղարկվել է:

Ստեղծման օրվանից առ այսօր Ընկերությունը երբևէ հաշվարկ-հաշվետվությունների ուշացում չի ունեցել: Համոզմունք ունենալով, որ Կենտրոնի ՀՏ-ն նպատակ չունի ձևական պահանջների պահպանմանը, ընկերությունը հայտնում է, որ հաշվետվությունների էլեկտրոնային համակարգը հնարավորություն չի ընձեռել (անհաղթահարելի խոչընդոտ է հանդիսացել) էլեկտրոնային եղանակով հանձնել 2013թ.–ի վերոնշյալ ամփոփ հաշվարկը:

Վերոգրյալ հաշվարկը էլեկտրոնային եղանակով ընկերության կողմից ուղարկվել է 18.02.2015թ.–ին և էլեկտրոնային կայքի հետ այդ օրը որևէ խնդիր չի եղել:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է Կենտրոնի ՀՏ 30.07.2015թ. թիվ 1475 Որոշումը կասեցնել և չկիրառել որևէ պատասխանատվության միջոց Ընկերությանը և Ընկերության լիազոր ներկայացուցչին:

«Հ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը»

«Հ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետը, քննարկելով «Երևանյան հեռանկարներ միջազգային երաժշտական փառատոն» ՀԿ վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 29.07.2015 թ-ի դրությամբ ընկերության ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 757.210 դրամ: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի կողմից 30.07.2015 թ-ին ընդունվել է թիվ 1475 որոշումը (այսուհետ նաև Որոշում) ընկերությունից 757.210 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Նշվեց նաև, որ Որոշման մեջ արտացոլված 757.210 դրամի հարկային պարտավորությունն առաջացել է ընկերության կողմից 2013 թ-ի համար «Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից ոչ ռեզիդենտին վճարված եկամուտների, պահված շահութահարկի ամփոփ հաշվարկ»-ը սահմանված ժամկետում չներկայացնելու համար: Մասնավորապես, համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի հարկային գործակալը պարտավոր է տարին մեկ՝ հաջորդ տարվա փետրվարի 20-ից ոչ ուշ, սահմանված ձևով ներկայացնել ամփոփ հաշվարկ իր գտնվելու (հաշվառման) վայրի հարկային տեսչության մարմին՝ անցած տարում ոչ ռեզիդենտին վճարված եկամուտների, պահված և պետական բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին (ամսական կտրվածքով):

Քննարկվող դեպքում 2013 թ-ի համար «Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից ոչ ռեզիդենտին վճարված եկամուտների, պահված շահութահարկի ամփոփ հաշվարկ»-ը մինչև 2014 թ-ի փետրվարի 20-ը ներկայացնելու փոխարեն, այն ընկերության կողմից ներկայացվել է միայն 2014 թ-ի հուլիսի 19-ին: Նշված խախտման համար կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը, որը կազմել է 1.094.139

դրամ: Հաշվի առնելով ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով առկա գերավճարը՝ գումարով 336.929 դրամ, ընկերության ոչ ռեզիդենտի շահութահարկի գծով պարտավորությունը կազմել է 757.210 դրամ:

Ընկերության պնդմամբ մինչև 2014 թ-ի փետրվարի 20-ը՝ նախ փետրվարի 11-ին, այնուհետև՝ 19-ին, ընկերությունը փորձել է էլեկտրոնային եղանակով ներկայացնել 2013 թ-ի համար «Կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից ոչ ռեզիդենտին վճարված եկամուտների, պահված շահութահարկի ամփոփ հաշվարկ»-ը, սակայն էլեկտրոնային համակարգի (file-online.taxservice.am) խափանման պատճառով նշված հաշվարկը չի հաջողվել ներկայացնել:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ ֆինանսների նախարարությունում առկա տվյալների համաձայն 2014 թ-ի փետրվարի 11-ին և 19 տնտեսվարող սուբյեկտների կողմից առանց որևէ խոչընդոտների էլեկտրոնային եղանակով ներկայացվել են բազմաթիվ հաշվետվություններ և էլեկտրոնային համակարգի խափանման որևէ դեպք չի արձանագրվել:

Հանձնաժողովը գտնում է, որ էլեկտրոնային եղանակով հաշվարկը ներկայացնելու ընթացքում էլեկտրոնային համակարգի խափանման փաստ արձանագրելու դեպքում ընկերությունը կարող էր դիմել ՀՀ ֆինանսների նախարարության «Թեժ գիծ» կամ արտատպեր համակարգի խափանումն արտացոլող էկրանի արտապատկերը՝ դրանով հիմնավորելով իր կողմից բերված փաստարկների իսկությունը:

Տվյալ դեպքում սույն գործում առկա չէ որևէ ապացույց, որը կհիմնավորեր վերոգրյալ հաշվարկը սահմանված ժամկետից ուշ ներկայացնելը էլեկտրոնային համակարգի խափանմամբ պայմանավորված լինելու հանգամանքը:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված պնդումներին, որ Որոշման մեջ սխալ է նշված ընկերության կազմակերպատիրավական ձևը, ապա տվյալ դեպքում տեղի է ունեցել վրիպակ, որը չի կարող հիմք հանդիսանալ Որոշման իրավաչափությունը կասկածի տակ դնելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 30.07.2015 թ-ի թիվ 1475 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ